ԱՐԴՅՈ՞Ք ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐՆ ՈՒՆԵՆ «ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱՄԵՆԱՔԻՉ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

DOI: 10.52174/2579-2989_2023.2-106

Տաթևիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ դասախոս

Գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը և մագիստրատուրան՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ: Այնուհետև կրթությունը շարունակել է ՀՊՏՀ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի ասպիրանտուրայում: Երկու տարի աշխատել է Պեկինի բիզնեսի և տեխնոլոգիայի հասարանում՝ որպես այցելու գիտնական: Որպես փորձագետ և հետազոտող՝ աշխատել է մի շարք միջազգային կազմակերպություններում (EU4Culture, USAID, UNICEF, ILO, IMO և այլն): Այժմ աշխատում է նաև ՀՊՏՀ կարիերայի կենտրոնում: Հեղինակ և համահեղինակ է մի շարք գիտական հոդվածների:

https://orcid.org/0000-0001-6488-2717

Հիմնաբառեր. *զարգացած երկրներ, ամենաքիչ զարգացած երկրներ, տնտեսական կախվածություն, պատմական փաստեր, կլիմայի փոփոխություն, մարդու իրավունքներ*

Զարգացած և ամենաքիչ զարգացած երկրների հարաբերություններն ուսումնասիրելը բավական բարդ խնդիր է, իսկ այն հարցը, թե արդյոք զարգացած երկրները որոշակի «պարտավորություններ» ունեն ամենաքիչ զարգացած երկրների հանդեպ, մասնագիտական շրջանակներում արդեն տասնամյակներ է՝ շարունակում է մնալ քննարկումների առարկա: Այս խնդիրը ներկայացնելու մի շարք կան, որոնք նոր լույս են սփռում զարգացած ու ամենաքիչ զարգացած երկրների տնտեսական, պատմական, էթիկական, քաղաքական հարաբերությունների վրա: Հետևաբար՝ կարևոր է տարբեր տեսանկյուններից քննարկել երկրների այս խմբերի միջև առկա հարաբերությունները՝ հաշվի առնելով ինչպես պատմական իրողությունները, այնպես էլ ժամանակակից մարտահրավերներն ու հնարավորությունները:

Զարգացած երկրները, ընդհանուր առմամբ, առանձնանում են սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակով, առաջադեմ տեխնոլոգիական հնարավորություններով և տնտեսական ու քաղաքական ուժեղ ինստիտուտների առկայությամբ: Մյուս կողմից, ամենաքիչ զարգացած երկրներն ունեն տնտեսության զարգացման ցածր տեմպեր, թույլ ինստիտուտներ, ենթակառուցվածքներ և սահմանափակ հասանելիություն այնպիսի հիմնարար բարիքների, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը, խմելու ջուրը և այլն: Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության ձևակերպման (ՄԱԿ)՝ ամենաքիչ զարգացած են համարվում ցածր եկամուտ ունեցող և կայուն

զարգացման տեսանկյունից լուրջ խոչընդոտների բախվող 46 երկրներ, որոնք չափազանց խոցելի են տնտեսական և բնապահպանական հարցերում և ունեն մարդկային կապիտալի ցածր մակարդակ[1]:

Ավելի ակնառու դարձնելու համար զարգացած ու ամենաքիչ զարգացած երկրների միջև տնտեսական ցուցանիշների տարբերությունները՝ աղյուսակ 1-ում ներկայացվել են մի շարք սոցիալ-տնտեսական ցուցանիշների համեմատություններ ամենաքիչ զարգացած 46 և Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ 38 երկրների միջև՝ ըստ Համաշխարհային բանկի տեղեկատվական շտեմարանների: Հատկապես ՀՆԱ և մեկ շնչի հաշվով ՀՆԱ համեմատական ցուցանիշներն ակնհայտ են դարձնում, որ երկրների այս խմբերի միջև տնտեսական «ճեղքվածքը» բավական մեծ է՝ հաշվի առնելով այն, որ ընթացիկ գներով ՀՆԱ ցուցանիշը ՏՀԶԿ անդամ երկրներում գերազանցում է ամենաքիչ զարգացած երկրներին մոտ 46 անգամ, իսկ մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշը՝ մոտ 37 անգամ:

Ամենաքիչ զարգացած երկրները ոչ բարենպաստ դիրքերում են հատկապես տեխնոլոգիական առաջընթացի, տնտեսության մեջ տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունների ապահովման տեսանկյունից: Այսպես, համաձայն Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության «Համաշխարհային նորարարության ինդեքս-2021» զեկույցի, 132 երկրների մեջ տեխնոլոգիական առաջընթացի ապահովման համաթվով 32-ից 21-ն ամենաքիչ զարգացած երկրներն են[2]: Ինչ վերաբերում է բարձր տեխնոլոգիաների արտադրության արտահանման մասնաբաժնին, ապա ամենաքիչ զարգացած բոլոր երկրներում դա արտահանման ընդհանուր ծավալի 1%-ից քիչ է[3]:

Ամենաքիչ զարգացած երկրները բավական հետ են մնում նաև ենթակառուցվածքների զարգացման առումով: Ընդ որում, խոսքն այնպիսի պարզ ենթակառուցվածքների մասին է, ինչպիսիք են էլեկտրականությունը, հուսալի և գերարագ ինտերնետ կապը, թվային հմտությունները, տեխնոլոգիաների կիրառման նախապայմանները: Մասնավորապես՝ 2019 թվականի տվյալներով ամենաքիչ զարգացած երկրների բնակչության 52.8%-ը չի ունեցել էլեկտրաէներգիայի հասանելիություն, մինչդեռ համաշխարհային միջինը 90.1% էր[4]:

Հատկապես COVID-19-ի, կլիմայի փոփոխության և ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով պարենային ու էներգետիկ ճգնաժամերի պարագայում ի հայտ եկած մարտահրավերներն ու խոչընդոտ-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Ամենաքիչ զարգացած ու ՏՀԶԿ անդամ երկրների մի շարք ցուցանիշների համեմատությունը, 2021 թ.[5]

	ՏՀԶԿ երկրներ	Ամենաքիչ զարգացած երկրներ
Ընդհանուր բնակչությունը (մարդ)	1.37 մլրդ	1.1 մլրդ
Բնակչության աճը (տարեկան %)	0.2	2.4
Կյանքի սպասվող տևողությունը (տարի)	79	65
Զուտ միգրացիան	2,433,502	-521,774
ՀՆԱ-ն (ընթացիկ, ԱՄՆ դոլար)	58.27 տրլն	1.28 տրլն
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն (ընթացիկ, ԱՄՆ դոլար)	42446.9	1164.9
ՀՆԱ տարեկան աճը (%)	5.4	2.0
Գործազրկության մակարդակը (%)	6.2	5.6
Դրամական փոխանցումների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)	0.4	4.5
ՕՈՒՆ-ի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)	1.9	2.0

[1] https://www.ohchr.org/en/development/right-development-and-least-developed-countries
[3] "Global Innovation Index202. Tracking Innovationthrough the COVID-19 Crisis" https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2021.pdf
[4] https://www.weforum.org/agenda/2022/01/least-developed-countries-ldc-technology/
[5] Համաշխարհային բանկի տեղեկատվական շտեմարան՝ https://data.worldbank.org/region/least-developed-countries-un-classificationOECD members | Data (worldbank.org)

ները ամենաքիչ զարգացած երկրներում դանդաղեցրել են սոցիալ-տնտեսական առաջընթացի հնարավորությունները: Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ «Ամենաքիչ զարգացած երկրներում աշխատանքի ներկան ու ապագան» զեկույցում ներկայացված են տնտեսության կառուցվածքային բարեփոխումների փուլում ամենաքիչ զարգացած երկրներում առկա մարտահրավերները, կանաչ տնտեսության անցման, լրիվ ու արդյունավետ զբաղվածության ապահովման ու արժանապատիվ աշխատանքի հնարավորությունների ստեղծման հիմնական խնդիրները[6]: Մասնավորապես՝ աշխատանքի շուկայի վերլուծության համատեքստում զեկույցում մատնանշվում է, որ ամենաքիչ զարգացած երկրներում ոչ ֆորմալ զբաղվածությունը հասնում է ընդհուպ 90%-ի: Ավելին, ամենաքիչ զարգացած երկրներում սուր է դրսևորվում նաև բևեռացումը՝ ինչպես տնտեսության կառուցվածքի, այնպես էլ տարածքային անհամաչափության առումով:

2022-2031 թվականների համար նախատեսված Դոհայի գործողությունների ծրագիրը կարևոր պատուհան է զարգացած ու ամենաքիչ զարգացած երկրների համար՝ հարաբերությունների կառուցման ու ամրապնդման, մասնավորապես՝ մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակությունների միջև համագործակցության խթանման տեսանկյունից[7]: Ըստ Դոհայի գործողությունների ծրագրի՝ նախանշվել են հետևյալ վեց առանցքային ուղղությունները.

1. ամենաքիչ զարգացած երկրներում ներդրումների ապահովում մարդկային կապիտալում, ինչպես նաև աղքատության վերացում և ներառական կարողությունների զարգացում,
2. գիտության, տեխնոլոգիաների և նորարարության կիրառում՝ խոցելիության դեմ պայքարելու և կայուն զարգացման նպատակներին հասնելու համար,
3. կառուցվածքային վերափոխման աջակցություն՝ որպես բարգավաճման շարժիչ ուժ,
4. միջազգային առևտրի և տարածաշրջանային ինտեգրման ընդլայնում,
5. կլիմայի փոփոխության, շրջակա միջավայրի դեգրադացման, COVID-19 համավարակի հետևանքների վերացում և ապագա ցնցումներին դիմակայելու կարողություն՝ ռիսկերի վրա հիմնված կայուն զարգացման համար,
6. միջազգային համերաշխության մթնոլորտի ձևավորում, գլոբալ համագործակցության ակտիվացում և նորարարական գործիքների ու կառուցակարգերի ներդրում:

Այն, որ զարգացած երկրները որոշակի պարտավորություններ ունեն ամենաքիչ զարգացած երկրների նկատմամբ, միջազգային մակարդակով արձանագրվել է նաև Դոհայում՝ 2023 թվականի մարտին տեղի ունեցած կոնֆերանսի ժամանակ, երբ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը նշել է, որ անհրաժեշտ է վերջ տալ չկատարված խոստումների դարաշրջանին, ապա հավելել, որ զարգացած երկրները պետք է կատարեն իրենց պարտավորությունները՝ ամենաքիչ զարգացած երկրներին տրամադրելով իրենց համախառն ազգային եկամտի 0.15-0.2%-ը՝ որպես զարգացման պաշտոնական աջակցություն, որը հաստատվել է Դոհայի գործողությունների ծրագրում: Ավելին, նա կարևորել է միջազգային ջանքերի ընդլայնումը՝ հարկերից խուսափելու, փողերի լվացման և ապօրինի ֆինանսական հոսքերի դեմ պայքարելու համար[8]:

Ամենաքիչ զարգացած երկրներին աջակցություն ցուցաբերելու ընթացքում շատ էական է նաև յուրաքանչյուր որոշակի երկրում առկա խնդիրների լուծմանը թիրախային և հասցեական մոտեցում ցուցաբերելը, քանի որ տարբեր երկրներում այդ խնդիրները բավական տարբեր են, իսկ դրանց լուծման ուղիները՝ առանձնահատուկ: Անհնար է գտնել մեկ «բանալի», որը կբացի ամենաքիչ զարգացած երկրներում առկա խնդիրների լուծման դուռը:

Զարգացած և ամենաքիչ զարգացած երկրների հարաբերություններում էական

[6] International Labour Organization, "Present and future of work in the Least Developed Countries", 2022, https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---integration/documents/publication/wcms_844025.pdf
[7] https://digitallibrary.un.org/record/3959499?ln=en
[8] https://press.un.org/en/2023/dev3447.doc.htm

դեր են խաղում նաև պատմական փաստերը: Շատ դեպքերում ամենաքիչ զարգացած երկրները տասնամյակներ շարունակ զարգացած երկրների գաղութներն են եղել, ինչի հետևանքով «ժառանգել» են աղքատություն, տնտեսական կախվածություն ու զարգացման ցածր ցուցանիշներ, որոնց դեմ պայքարն արդիական է նաև մեր օրերում: Մյուս կողմից, սա դրդապատճառ է զարգացած երկրների համար պատմական «պատասխանատվություն» դրսևորելու ու աջակցություն ցուցաբերելու ամենաքիչ զարգացած երկրներին՝ գոյություն ունեցող մարտահրավերները հաղթահարելու հարցում: Իհարկե, այդ «պատասխանատվության» չափի ու ընդգրկման տիրույթները որոշելը բավական խնդրահարույց է և մի շարք քննարկումների ու բանավեճերի առարկա կարող է դառնալ:

Հաջորդ կարևորագույն մարտահրավերը, որը հատկապես սուր է արտահայտվում ամենաքիչ զարգացած երկրներում, կլիմայի փոփոխությունն է, ինչը, անկասկած, անդրադառնում է բոլոր երկրների վրա, սակայն ազդեցությունն ամենաքիչ զարգացած երկրների վրա անհամաչափ շատ է: Ստացվել է այնպես, որ, չնայած ջերմոցային գազերի արտանետումների միայն 3.3%-ն է բաժին ընկնում ամենաքիչ զարգացած երկրներին, սակայն վերջիններս ամենաշատն են բախվում կլիմայի փոփոխության հետևանքով ի հայտ եկած խնդիրներին[9]: Զարգացած երկրները, որոնք արտադրության ծավալների և համաշխարհային տնտեսության մեջ իրենց զբաղեցրած դիրքի պատճառով ջերմոցային գազերի արտանետումների հիմնական պատասխանատուներն են, առնվազն բարոյական պարտավորություն ունեն ամենաքիչ զարգացած երկրների առաջ՝ օգնելու հարմարվել ու դիմակայել կլիմայի փոփոխության ահռելի բացասական ազդեցությանը: Օգնություններն ու աջակցությունները կարող են ներառել կլիմայի հարմարվողականության նախագծերի մշակումն ու իրականացումը, տեխնոլոգիաների փոխանցումն ու վերականգնվող էներգիայի տեղայնացման հնարավորությունները և կայուն զարգացմանն ուղղված ֆինանսական աջակցությունը:

Զարգացած և թույլ զարգացած երկրների միջև հարաբերությունների հիմնական առանձնահատկությունը տնտեսական փոխկապվածությունն ու փոխկախվածությունն է: Մի կողմից զարգացած երկրները հիմնականում օգտագործում են ամենաքիչ զարգացած երկրներում առկա ռեսուրսները (հումք, աշխատուժ և այլն), մյուս կողմից՝ ամենաքիչ զարգացած երկրներն ուղղակիորեն կախված են զարգացած երկրների ներդրումներից ու օգնություններից: Համագործակցության այս ձևաչափը երկրների այս խմբերի միջև կարող է ստեղծել ինչպես զարգացման ու բարգավաճման հնարավորություններ, այնպես էլ մարտահրավերներ՝ կապված բևեռացվածության սրման, շահագործման և տնտեսական կախվածության հետ: Բացի այդ, շարունակ ընդլայնվող գլոբալացման միտումները համաշխարհային տնտեսության մեջ ձևավորել են այնպիսի իրականություն, որտեղ սոցիալ-տնտեսական խնդիրները մեկ երկրից «տեղաշարժվում» են դեպի մյուսը: Ուստի այս պարագայում ամենաքիչ զարգացած երկրներում առկա սոցիալ-տնտեսական խնդիրները մի կողմից դժվարացնում են վերջիններիս մասնակցությունը համաշխարհային տնտեսության ինտեգրացիոն գործընթացներին, մյուս կողմից էլ՝ զարգացման թույլ տեմպերի պատճառով ի հայտ է գալիս միգրացիոն մեծ արտահոսք հատկապես այդ երկրներից դեպի զարգացածներ՝ շատ հաճախ սոցիալ-տնտեսական լարվածություն ստեղծելով նաև այդ երկրներում: Այս համատեքստում զարգացած երկրների կողմից ամենաքիչ զարգացած երկրների տնտեսությունների զարգացմանն աջակցությունը շահեկան է դառնում հենց աջակցություն ցուցաբերողների համար:

Ամենաքիչ զարգացած երկրները բախվում են նաև մարդու իրավունքներին առնչվող մի շարք խնդիրների ու մարտահրավերների, որոնց լուծումը զարգացած երկրների հիմնական «օրակարգում» է: Այս առումով, զարգացած երկրների «պարտավորությունները» ամենաքիչ զարգացած երկրների հանդեպ բավական կա-

[9] https://reliefweb.int/report/world/state-climate-ambition-snapshots-least-developed-countries-ldcs-and-small-island-developing-states-sids#:~:text=Despite%20only%20accounting%20for%203.3,LDCs%20(IIED%2C%202021).

րևոր են՝ այդ երկրներում մարդու իրավունքների լիարժեք իրացման, ժողովրդավարական արժեքների սերմանման, օրենսդիր, գործադիր ու դատական մարմինների ու ինստիտուտների կայացման աջակցության հարցերում: Բացի այդ, ամենաքիչ զարգացած երկրների առաջխաղացման լրջագույն խոչընդոտներից են նաև քաղաքական անկայունությունն և ինստիտուցիոնալ մարտահրավերները: Հենվելով քաղաքական ինստիտուտների կայացման սեփական փորձի վրա՝ զարգացած երկրները կարող են աջակցել ամենաքիչ զարգացած երկրներին բարեփոխումների իրականացման փուլերում՝ օժանդակելով այդ երկրներում ընտրական գործընթացների ազատությանն ու արդարությանը, խթանելով օրենքի գերակայությունն ու կառուցելով ժողովրդավարական ինստիտուտներ:

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով պատմական, տնտեսական, բնապահպանական, մարդու իրավունքների ապահովման ու քաղաքական ինստիտուտների կայացածությանն առնչվող մարտահրավերները ու դրանց ստեղծած խնդիրների ընդգրկման շրջանակը միջազգային հանրության համար, ամեն դեպքում զարգացած երկրներն ունեն որոշակի «պարտավորություններ» ամենաքիչ զարգացած երկրների հանդեպ: Այդ «պարտավորությունների» իրացումը, իհարկե, պահանջում է բովանդակային ու թիրախային համատեղ աշխատանք՝ կառավարությունների, միջազգային կազմակերպությունների և երկրների քաղաքացիական հասարակությունների ակտիվ ներգրավմամբ: Իսկ այս ուղղությամբ համագործակցության ընդլայնումն առանցքային ուղենիշ է ավելի կայուն, ներառական ու արդար աշխարհ կառուցելու տեսլականը կյանքի կոչելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Համաշխարհային բանկի տեղեկատվական շտեմարան՝ https://data.worldbank.org/region/least-developed-countries-un-classification
2. https://www.ohchr.org/en/development/right-development-and-least-developed-countries
3. International Labour Organization, “Present and future of work in the Least Developed Countries”, 2022, https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---integration/documents/publication/wcms_844025.pdf
4. International Labour Organization, “Present and future of work in the Least Developed Countries”, 2022, https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---integration/documents/publication/wcms_844025.pdf
5. https://www.weforum.org/agenda/2022/01/least-developed-countries-ldc-technology/
6. https://digitallibrary.un.org/record/3959499?ln=en
7. https://press.un.org/en/2023/dev3447.doc.htm
8. https://reliefweb.int/report/world/state-climate-ambition-snapshots-least-developed-countries-ldcs-and-small-island-developing-states-sids#:~:text=Despite%20only%20accounting%20for%203.3,LDCs%20(IIED%2C%202021)

Татевик ВАРДАНЯН
Преподаватель кафедры международных экономических отношений, АГЭУ

ГЕОЭКОНОМИЧЕСКАЯ ХРОНИКА

ИМЕЮТ ЛИ РАЗВИТЫЕ СТРАНЫ «ОБЯЗАТЕЛЬСТВА» ПЕРЕД НАИМЕНЕЕ РАЗВИТЫМИ СТРАНАМИ?

Изучение отношений между развитыми и наименее развитыми странами является сложной задачей. Вопрос о том, есть ли у развитых стран определенные “обязательства” перед наименее развитыми странами, на протяжении десятилетий был предметом нескольких дебатов в профессиональных кругах. Есть много точек зрения на эту проблему, которые проливают новый свет на экономические, исторические, этические и политические отношения между развитыми и наименее развитыми странами. В этом контексте важно обсудить связи между этими группами стран с разных точек зрения, учитывая как исторические реалии, так и современные вызовы и возможности.

Ключевые слова: *развитые страны, наименее развитые страны, экономическая зависимость, исторические факты, изменение климата, права человека*

Tatevik VARDANYAN
Lecturer of the Chair of International Economic Relations, ASUE

GEOECONOMIC CHRONICLE

DO DEVELOPED COUNTRIES HAVE «OBLIGATIONS» TO LEAST DEVELOPED COUNTRIES?

Studying the relationship between developed and least developed countries is a complex undertaking. The question of whether developed countries have certain “obligations” to least developed countries has been the subject of several debates within professional circles for decades. There are many aspects to consider when discussing this problem, which shed new light on the economic, historical, ethical, and political relations of developed and least developed countries. In this context, it is essential to discuss the connections between these groups of countries from different perspectives, considering both historical realities and contemporary challenges and opportunities.

Keywords: *developed countries, least developed countries, economic dependence, historical facts, climate change, human rights*